ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՍԿԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԳԱԳԻԿԻ

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԻԶԱՅՆԵՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ВОСКАНЯН РУБЕН ГАГИКОВИЧ

ДИЗАЙНЕРСКИЕ ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ ТЕРРИТОРИИ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ ГОРОДА АШТАРАК

АВТОРЕФЕРАТ
диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное искусство, дизайн”

ЕРЕВАН - 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ Դավիթ Գրիգորի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՂԱԶԱՐՅԱՆ ՎԻԳԵՆ Հովհաննեսի

արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մարտին Վարդանի

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2020 թ. հոկտեմբերի 8-ին, ժամը 16.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. օգոստոսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ասատրյան Ա.Գ.

Тема диссертации утверждена в Государственной художественной академии Армении.

Научный руководитель - доктор архитектуры, профессор
КЕРТМЕНДЖЯН Давид Григорьевич

Официальные оппоненты - член-корреспондент НАН РА,
доктор искусствоведения, профессор
КАЗАРЯН Виген Оганесович
кандидат искусствоведения, доцент
Арутюнян Мартин Варданович

Ведущая организация – Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна

Защита диссертации состоится 8-го октября 2020 г. в 16.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна, 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 27-го августа 2020г.

Ученый секретарь специализированного совета
доктор искусствоведения, профессор

Асатрян А. Г.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության արդիականությունը: Արագածոտնի մարզկենտրոն Աշտարակ քաղաքը Հայաստանի պատմական քաղաքներից է, որն ուշագրավ է իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ: Այդ հուշարձանների հետ ծանոթանալով՝ կարելի է նկատել, որ դրանք ձգվում են մինչև մարդու կենսագործունեության ակունքներ: Աշտարակի հուշարձանների կազմում կան թե՛ բրոնզեդարյան դամբարանադաշտեր, թե՛ միջնադարյան կոթողներ ու եկեղեցիներ, թե՛ նախախորհրդային և խորհրդային կառույցներ: Աշտարակի պատմամշակութային հուշարձանները կանգնած են քաղաքի ստեղծման ու զարգացման ակունքներում: Կանգուն լինելով՝ դրանք վկայում են Աշտարակի հինավուրց լինելու մասին: Սակայն այժմ Աշտարակի պատմամշակութային հուշարձանները մարդու կենսագործունեության հետ անհամատեղելի են: Ուստի, այսօր ժամանակակից կյանքին ինտեգրելու և քաղաքի հուշարձանապահպանությանը նպաստելու համար, արդիական է տարբեր տեսանկյուններից դրանց ուսումնասիրությունը և իրավիճակի գնահատումը: Փաստորեն, բուն հուշարձանապահպանության մինչ այս կիրառվող ճարտարապետության և զբոսաշրջության միջոցառումներն այսօր բավարար չեն հուշարձանների կենսագործունեության լիարժեք ապահովման համար, այլ անհետաձգելի հրամայական խնդիր է նաև հուշարձանը շրջապատի հետ ներդաշնակեցնող գեղագիտական և ֆունկցիոնալ միջոցառումների կիրառումը, որը, որպես դիզայներական հայեցակարգ, ուսումնասիրվել է ներկայացվող ատենախոսության մեջ:

Ատենախոսության նպատակն է Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքների դիզայներական կազմակերպման խնդիրների բացահայտումն ու հայեցակարգի բնութագրումը:

Ատենախոսության գիտական խնդիրներն են՝

1. Աշտարակ քաղաքի զարգացման և դրա պատմամշակութային հուշարձանների ցանկի քննական ուսումնասիրությունը, հետևաբար և դրանց դասակարգումը՝ որպես էքսպեդիցիոն տարածքներ, շենքեր և փոքր ֆորմաներ,
2. Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների համալիր կազմակերպման ինֆրաստրուկտուրայի հավելումը՝ որպես զբաստեղծագործական համակառույց, հանգստի կազմակերպման օբյեկտներ, մատչելիության միջոցառումներ,
3. Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների միջավայրի կազմակերպման տեսության և միջազգային զուգահեռների ուսումնասիրությունը,
4. Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների և միջավայրի փաստագրական ուսումնասիրությունը,
5. Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի կազմակերպման դիզայներական անհրաժեշտ միջոցառումների կիրառությունը, այդ թվում են հուշարձանների և նրանց տարածքների՝

- հորինվածքի կազմակերպումը,
- տարածքի կահավորման անհրաժեշտ տարրերի մշակումն ու տեղադրումը,
- հուշարձանի և տարածքի լուսավորման խնդիրների կարգավորումը,
- ուղղորդված շարժման և մոտեցումների կազմակերպումը,

• վիզուալ հաղորդակցման տարրերի կիրառումը,

6. Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների նկատմամբ թույլատրվող դիզայներական միջամտությունների հիման վրա կայացնել դրանց մշակման դիզայներական հայեցակարգը կամ խնդիրները:

Ատենախոսության առարկան Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձաններն են՝ իրենց միջավայրի կազմակերպման հարցերով, այդ թվում և պատմաիրավիճակային տիպաբանական փաստագրությունը, տարեգրությունը, գլխավոր հատակագիծը, ծավալատարածական հարցերը, այցելության համար հարմարեցումը և այլն:

Ատենախոսության պատմական և աշխարհագրական սահմաններն ընդգրկում են պատմական մեծ ժամանակաշրջան՝ բրոնզեդարյան դամբարանադաշտերից մինչև 20-րդ դարի շինություններ: Գլխավոր շեշտը դրված է Աշտարակ քաղաքի հիմնական տարածքի մեջ գտնվող հուշարձանների վրա, այդ պատճառով Մուղնիի տարածքը չի ընդգրկվել: Զուգահեռների կապակցությամբ ընդգրկված է համապատասխան միջազգային ժառանգության աշխարհագրությունը:

Ատենախոսության մեթոդն է՝ պատմական հուշարձանների և դրանց տարածքների որակական և համեմատական վերլուծությունը: Այդ կապակցությամբ որպես դիզայներական մեթոդական հայեցակարգ են ընտրված ներքոհիշյալ կետերը.

• հորինվածքային վերլուծությունը (առանցք և մոտեցումներ, հորինվածքի կենտրոն, դոմինանտ ու միջավայրի կոմպլիմենտար ձևավորումը),
• ձևավորման վերտիկալ պլանիրովկայի վերլուծությունը,
• ազդանշանային միջոցառումների ապահովումը,
• առարակայական ինֆրաստրուկտուրայի ներմուծումը և Էրգանոմիկան,
• հուշարձանների տարածքի շահագործումը և դրանից բխող միջոցառումները՝ բնական և արհեստական լուսավորության խնդիրներ, ցանկապատումը, հուշարձանապահպանության արդի միջոցառումների ներմուծումը:

Ատենախոսության նորույթը կայանում է նրանում, որ այն դիզայնի տեսանկյունից կատարվելով՝ առաջին անգամ քննականորեն ամբողջացնում է Աշտարակ քաղաքի պատմամշակութային ժառանգության պահպանության ճարտարապետական և զբոսաշրջության ծրագրերը: Առաջին անգամ՝

ա.ցուցակագրվում են և զբոսաշրջական շրջանառության մեջ են դրվում տարածքի պատմաճարտարապետական հուշարձանները,

բ.սահմանվում է կազմակերպման ենթակա հուշարձանների միջավայրային հայեցակարգ,

գ.ծրագրված գծագրերի են վերածվում յուրաքանչյուր միջավայրի հորինվածքային ներդաշնակության միջոցները (առանցք, հորինվածքի կենտրոն, հիերախիա, փռվածքներ և այլն):

Ատենախոսության փորձաքննությունը կատարվել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի արվեստի տեսության և պատմության ամբիոնի քննարկումների ընթացքում և հաստատվել է ակադեմիայի ընդհանուր գիտական խորհրդում: Ատենախոսության առանձին դրույթները ներկայացվել են

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների գիտական նստաշրջաններում:

Ատենախոսության գրականության տեսությունը արտահայտված է երկու հիմնական ուղղությունով.

Ա. Ատենախոսության թեմայի կապակցությամբ գոյություն ունեցող գրականության քննական տեսության կապակցությամբ ներգրավվել են Արագածոտնի մարզպետարանում առկա փաստաթղթերը (Հայաստանի հանրապետության N 628 որոշում, 29 մայիսի 2002թ. և Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծ, տեքստային մաս N ԱՔ-ԱՇՁԲ-1/1, 2012 թվական): N 628 որոշմամբ անվավեր է ճանաչվել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1983 թվականի հուլիսի 4-ի «Հայկական ՍՍՀ տարածքում պետական պահպանության տակ վերցված պատմության և կուլտուրայի հուշարձանների և նրանց պահպանական գոտիների ցուցակների հաստատման մասին» N 377 որոշման 1-ին կետը, սակայն դրանք թեմայի մասնագիտական դրույթները լիովին չեն արտահայտում և ըստ արժանվույն ենթարկվեցին նորովի վերանայման:

Բ.Ատենախոսությունն իր հիմնադրույթներում հիմնվում է բազմապրոֆիլ գրականության վրա: Դրանք հակիրճորեն կարելի է ներկայացնել հետևյալ աշխատություններով.

1. Աշտարակ քաղաքի պատմության կապակցությամբ հիմնականում ներգրավվել է Երվանդ Շահազիզի «Աշտարակի պատմությունը» աշխատությունը:
2. Աշտարակի հուշարձանների ճարտարապետության ընդհանուր նկարագրությունը ներկայացնելիս հիմնականում օգտագործվել է Սուրեն Սաղումյանի «Աշտարակ», Ստեփան Մնացականյանի «Երևանը և նրա շրջակայքը», Էմին Հակոբյանի «Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը» աշխատությունները:
3. Աշխատությունում ընդգրկված հուշարձանավայրերի դեստինացիաների կապակցությամբ օգտվել ենք ՏԻ-ՍԻ-ԷԼ Արմենիա աշխատության՝ Արագածոտնի մարզի Աշտարակին հատկացված ենթամասից (Aragatsotn Marz: 5 of 94 - TourArmenia © 2008 Rick Ney ALL RIGHTS RESERVED - www.TACentral.com):
4. Ատենախոսության տեսական դրույթները հիմնվում են Շիմկոյի «Դիզայնի հիմունքներ և միջավայրի նախագծում» աշխատության վրա (Մոսկվա 2005թ): Փաստորեն, միջավայրի կազմակերպման հայեցակարգը շրջանառության մեջ է դնում հեղինակի 14 դրույթներից՝ 1.2-ը (էջ 30), 2.1 (էջ 41), 2.2 (էջ 48), 3.3 (էջ 86), 4.3 (էջ 109), 5,1 (էջ 128) և 5,3 (էջ 128):
5. Միջավայրի կազմակերպման օրենսդրական ակտերի կապակցությամբ ներգրավվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿՈՄՈՍ-ի և ԻԿՈՄ-ի մի շարք կոնվենցիաների, այդ թվում՝ Աշտարակի վարկածին համապատասխանող սկզբունքներին ու նպատակներին և մեթոդներին ու գործիքներին վերաբերվող թվով 16 դրույթները:

Ատենախոսության կառուցվածքը նախատեսվում է ներածության հաջորդող երեք գլուխներով: Առաջին գլուխը թեմայի վերաբերյալ տեղեկատվությունն է: Երկրորդ գլուխը Աշտարակ քաղաքի շրջակա պատմամշակութային հուշարձանների տարածքի փաստագրական և դիզայներական կազմակերպման վերլուծական

ուսումնասիրությունն է: Երրորդ գլուխը Աշտարակ քաղաքի կորիզի պատմամշակութային հուշարձանների տարածքի փաստագրական և դիզայներական կազմակերպման վերլուծական ուսումնասիրությունն է: Ատենախոսության ընդհանուր եզրակացություններում ընդհանրացվել է ատենախոսության նպատակի մեջ ամրագրված և ատենախոսության մեջ կիրառված հայեցակարգը:

Առաջին գլուխ
Պատմատեսական և զուգահեռների ընդհանուր տեղեկություններ

Աշտարակ քաղաքի պատմահնագիտական և պատմաճարտարապետական հուշարձանների միջավայրի կազմակերպումը սերտորեն կապված է բնակավայրի պատմության զարգացման հետ: Այդ կապակցությամբ կարևոր է հուշարձանների տեղագրությունից առաջ անդրդառնալ բնակավայրի պատմությանը:

Աշտարակ քաղաքի սկզբնավորման մասին գրեթե անհնար է ստույգ ներկայացնել, սակայն աչքի առաջ ունենալով հազարամյակների պատմություն ունեցող հնագույն դամբարանադաշտերը, կարելի է ենթադրել, որ Աշտարակի պատմությունը ձգվում է մինչև մարդկային կենսագործունեության ակունքներ:

Պատմամշակութային հուշարձանների տարածքում թանգարաններ ձևավորելու հիմքում եղել է երկու կարևոր գործոն՝ պահպանել պատմական հուշարձանն ու դրան կից տարածքը՝ իրեն բնորոշ բնությամբ ու լանդշաֆտով, ինչպես նաև որոշակի գեղարվեստական արժեք ունեցող առարկաներ՝ նկարներ, եկեղեցական-պաշտամունքային և պատմական իրեր՝ իրենց հարազատ միջավայրում: Նման տեսակետից առաջին եկեղեցի-թանգարաններ առաջացել են Եվրոպայում՝ Իտալիայում, Ֆրանսիայում, որտեղ պաշտամունքային կառույցները վեր են ածվել տարբեր ֆունկցիոնալ պահանջներ ներկայացնող թանգարանների:

Թանգարանացման հիմնական նպատակն է անձեռնմխելի դարձնել անշարժ հուշարձանները (առանձին ճարտարապետական կառույցներ, եկեղեցական, պատմական և բնության համալիրներ, արդյունաբերական շինություններ և այլն), ինչպես նաև դրանց տարածքներում վերականգնել ու պահպանել ոչ նյութական ժառանգության (կենցաղային և ազգագրական ավանդույթներ) կապը պատմամշակութային միջավայրի և դրանց տարրերի միջև:

Աշտարակ քաղաքում պատմամշակութային հուշարձանները մինչև օրս ուսումնասիրվել են ճարտարապետական և զբոսաշրջության համակարգման տեսանկյունից: Նաև կատարված են քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագծեր և առանձին հուշարձանների պատմամշակութային հիմնավորման մի քանի նախագծեր, սակայն Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների մեծ մասն իրենց միջավայրով գտնվում են վատթարագույն վիճակում, և դրանց կազմակերպման խնդիրների լուծումը դեռևս առջևում է:

Աշտարակի պատմամշակութային հուշարձանների ցանկի համաձայն՝ քաղաքում և դրա տարածքում ներկայումս գոյություն ունի 35 հուշարձան, ինչպես նաև՝ Մուղնիի տարածքը: Դրանք ցուցակագրվել են՝ ըստ հուշարձանների տեսակների: Սակայն խնդրո առարկա հուշարձանների տարածքների

կազմակերպմանը ճանաչողական բնույթ տալու համար անհրաժեշտ է դրանք խմբավորել տարածքային ընդհանրությամբ՝ մասնավորելով դրանց պատմական ժամանակաշրջանի պատկանելությունը։

Աշտարակի քաղաքի և հարակից հուշարձանները պատկանում են տարբեր ժամանակաշրջանների՝

Նախնադարյան հուշարձաններ՝

1/ Վերին Նավեր միջին բրոնզի դարի բնակավայրի տարածքը (3-1-րդ հազարամյակներ։

2/ Խոջաբաղեր դամբարանադաշտը (2-րդ և 1-ին հազարամյակներ)։

4/ Ուլատիտիկ ամրացված պաշտամունքային համալիրը՝ Քասաղի կիրճի ձախ ափին։

5/ Ջրանցք Մայր առու (Ուրարտական կառույց, Ք.ա. 8-7-րդ դարեր)։

Միջնադարյան և նոր ու արդի պատմամշակութային հուշարձաններ։ Դրանք ավելի բազմազան են հետևյալ ժամանակագրական տվյալներով.

1/ Մուղնիից դեպի արևմուտք են գտնվում միջնադարյան քարայր կացարանները։ Քասաղի կիրճում է գտնվում նաև «Նահատակի գերեզմանը»։

2/ Վաղ միջնադարյան հուշարձաններ են՝ Ծիրանավոր եկեղեցին (5-րդ դ.), Կարմրավոր եկեղեցին (7-րդ դ.)։

3/ Ձարգացած միջնադարյան հուշարձաններ են՝ Սպիտակավոր եկեղեցին (13-14 դդ.), Սբ. Մարիանե եկեղեցին՝ (1281 թ.), Սբ. Սարգիս եկեղեցին (13-րդ դար, վերակառուցվել է 1985թ.), Աշտարակի հին կամուրջը։

4/ Ուշ միջնադարյան հուշարձաններ, որոնք հիմնականում ճարտարագիտական և կոմունալ կառուցվածքներ են, ինչպես՝ Աշտարակի նոր կամուրջը (1664 թ.)։

5/ Նոր ժամանակաշրջանի հուշարձաններ, որոնք հիմնականում ժողովրդական բնակելի տան օրինակներ են։

6/ Արդի ժամանակաշրջանի հուշարձանները, բացի Աշտարակի քաղաքային այգուց (1965թ.) և մշակույթի տնից (1950թ.), հիմնականում երախտավորների տուն-թանգարաններ կամ հուշասյուներ են։

7/ Աշտարակը նշանավոր է հին գերեզմանատարածքներով, որոնք ընդգրկում են մեմորիալ կոթողներ, խաչքարեր և տապանաքարեր։ Դրանք հիմնականում ընդգրկված են հին գերեզմանատան տարածքում, ինչպես նաև եկեղեցիների տարածքի վրա։ Ընդհանուր առմամբ՝ դրանցում հաշվառված է 8 կոթող, 31 խաչքար և 4 տապանաքար։

Հաշվի առնելով Աշտարակի հուշարձանների պատմական զարգացումը, համադրելով այն միջավայրի դիզայնի մեթոդական սկզբունքների հետ և դրանց միջազգային կիրառության ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաներին՝ կարելի է եզրակացնել, որ Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի ուսումնասիրությունը ստորև կկատարվի երկու գոտիով։ Առաջին գոտին ընդգրկում է Աշտարակի շուրջ եղած պեղման ենթակա վայրերը և այլ հուշարձանների տարածքները։

Երկրորդ գոտին ընդգրկում է Աշտարակ քաղաքի կորիզի տարածքը՝ իր հայտնի հուշարձաններով։ Այդ թվում են Աշտարակի քաղաքային այգին և

շրջակայքը, հրապարակը և դրա շրջակա հուշարձանները, ինչպես նաև Բերդաթաղը՝ իր հուշարձաններով։

Արդյունքում՝ կստացվի բաց երկնքի տակ ներկայացվող թանգարանային համալիր, որին նպաստող պայմաններն են՝

- կատարել մանրամասն արխիվային հետազոտություն տեղանքի և հուշարձանների մասին,
- տալ հուշարձանների կոնսերվացման առաջարկներ,
- կատարել վերականգնման աշխատանքներ /անհրաժեշտության դեպքում/,
- ստեղծել համապատասխան մակերեսներ /տաղավարներ/՝ մշակութային ու գեղարվեստական իրերի ցուցադրման համար,
- սահմանափակել հուշարձան-թանգարանի պահպանվող տարածքը,
- մաքրել ու բարեկարգել տարածքը այցելությունների համար,
- տեղադրել լուսավորող սարքեր և համապատասխան հարմարություններ ստեղծել այցելուների համար,
- տեղադրել տեղեկատու վահանակներ և ցուցադրությունների ուղղորդիչներ /սլաքներ/ թանգարանի բոլոր նմուշների հետ ծանոթացման համար,
- գտնել հարմար տարածքներ կայանատեղերի համար,
- տեղադրել հանգստի և սանիտարահիգիենիկ տաղավարներ։

Երկրորդ գլուխ
Աշտարակ քաղաքի շրջակա պատմամշակութային հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը

Մարդկության պատմությունն ու մշակույթը սկիզբ է առնում դեռ հազարամյակներ առաջ։ Հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրությունները սկսել պատմական այդ շերտից։ 1972թ. համաշխարհային կոնվենցիայի ընդունման սկզբից ի վեր ուշադրության կենտրոնում այն է, որ «մշակութային կամ բնության ժառանգության ցանկացած օբյեկտի վնասումը կամ անհետացումը հանգեցնում է աշխարհի բոլոր ազգերի ժառանգության կործանարար աղքատացմանը»։ Հենց այստեղ է ձևավորվում ներկայացվող գլխի գիտական խնդիրը։

Համաշխարհային ուշագրավ օրինակներից է Մեծ Բրիտանիայում գտնվող Սթոունհենջ մեգալիթյան խոշոր կառույցը, որը մեծ ճանաչում ունեցող հուշարձաններից մեկն է։ Այն կառուցվել է Միջին բրոնզի դարից Ուշ բրոնզի դար անցման շրջանում՝ Ք.ա. 1900-1400 թթ.։

Մեր նպատակն է առանձնացնել և ուսումնասիրել Աշտարակի պատմամշակութային հուշարձանների տարածքները, ինչից հետո, ըստ հայեցակարգի, կատարել տեղանքի գոտևորում, կազմակերպել մատչելի մոտեցումներ, անցումներ, հանգստի հատվածներ, տեղադրել անհրաժեշտ տեղեկատվական վահանակներ։ Թեման ավելի արդիական է դառնում, երբ տարբեր գրականություններ ուսումնասիրելով՝ պարզ երևում է, որ քաղաքի ծագման իրադարձությունների մասին տեղեկությունների մեծ մասը հիմնված են ենթադրությունների վրա։

Վերին Նավերի տարածքը։

Հայկական պատմական մեծ ժամանակաշրջան է ներառում Վերին Նավեր հուշարձանախումբը: Այն գտնվում է Աշտարակի տարածաշրջանում, մասնավորապես ընդգրկում է Փարպի համայնքի, Աշտարակ-Գյումրի, Աշտարակ-Ագարակ ճանապարհների մերձակա աջ և ձախ հատվածները: Դամբարանադաշտը զբաղեցնում է շուրջ 200 հա տարածություն, որն ընկած է Շաղվերդ գետի ձախակողմյան սելավատարի (Վիշապաձորի) ավազանում և Արագած լեռան հարավ-արևելյան ստորոտում:

Վերոհիշյալ տարածքում գտնվող դամբանաբլուրներից բացի տարածաշրջանում կան նաև վերգետնյա հատվածներից զուրկ և խաթարված դամբարաններ, որոնցով հանդերձ Վերին Նավերի դամբարանների քանակությունը հազարից ավելի է (նկ.1): «Այսպիսով, կարող ենք փաստել, որ դամբարանների քանակով և զբաղեցրած տարածքով Վերին Նավերը ոչ միայն Հայաստանի, այլև Առաջավոր Ասիայի միջին բրոնզի դարի ամենաընդարձակ դամբարանադաշտերից մեկն է, որտեղ թաղումներ են կատարվել ավելի քան մեկ հազարամյակ՝ Ք.ա 3-րդ հազարամյակի 2-րդ կեսից մինչև Ք.ա. 12-11 դդ:

Վերին Նավեր հուշարձանախմբի ժամանակարջանը ձգվում է միջին բրոնզի դարից մինչև միջնադարյան քարակոթողներ: Դրանք են՝

- Միջին բրոնզի դարի դամբարաններ,
- Ուշ բրոնզի դարի դամբանաբլուրներ,
- Վաղ երկաթի դարի դամբանաբլուրներ,
- Կեղծ (կենոտաֆ) դամբարաններ,
- Հելլենիստական և միջնադարյան բնակատեղիներ,
- Միջնադարյան քարակոթողներ:

Միջին բրոնզի դարի դամբանափոսերը հիմնականում հիմնահողային են, սակայն առանձին դեպքերում, երբ հողի շերտը կարծր չի եղել և կարող էր փլուզվել, այն եզերել են բազալտ քարերից կառուցված պատերով: Կան նաև այնպիսի դամբարաններ, որոնց պատերից երկուսը կազմված են եղել բնական ժայռի կտրվածքներով, իսկ մյուս երկուսը՝ շարել են քարերով:

Ուշ բրոնզի դարի բոլոր դամբարաններն ունեն գետաքարերից ձևավորված կրոմլեխներ և տուֆից դամբանասրահներ(նկ.2):

Ի տարբերություն հասարակ մարդկանց դամբարանների՝ ուշ բրոնզի դարի վերնախավի դամբարաններում առկա են տիրոջ հետ ծառաների և ստրուկների թաղման փաստեր:

Ուշ բրոնզե դարից շուրջ մեկ հազարամյակ անց այստեղ ձևավորվել և հիմնվել են հելլենիստական և միջնադարյան փոքր գյուղեր, որոնց ավերակները դիտարկվում են դամբարանադաշտի կենտրոնական և արևմտյան հատվածներում:

Այսպիսով, կազմելով ժամանակագրական մեծ շրջան՝ Վերին Նավեր դամբարանադաշտը հուշարձանապահպանության անգնահատելի արժեք ներկայացնող հատված է, որտեղ հնարավոր է ծանոթանալ մարդկության պատմության հնագույն էջերին, որն, ըստ երևույթին, ընկած է մշակույթի ձևավորման և մարդու զարգացման հիմքում:

Վերին Նավերի և բոլոր մյուս հնավայրերի տարածքների կազմակերպումը

պետք է իրականացվի բացառապես հնագետների մասնակցությամբ և հսկողության ներքո։

«Արծվի թև» հուշակոթող։

Վերին Նավեր դամբարանադաշտի մերձակայքում է գտնվում 1915 թվականի Վանի ինքնապաշտպանության մասնակիցներին նվիրված հուշարձանը։ Կառուցվել է 1970-1979 թվականներին։ Հեղինակը ճարտարապետ Ջիմ Թորոսյանն է։ Ներկայումս մարդկանց անտարբերության պատճառով հուշակոթողը գտնվում է լքված և անմխիթար վիճակում։

Խոջաբաղեր դամբարանադաշտ։

Գտնվում է Աշտարակ քաղաքի հյուսիս-արևմտյան եզրային հատվածում, Աշտարակ-Գյումրի ճանապարհի աջ կողմում՝ բուն բնակավայրից դուրս։ Ըստ վերգետնյա հնագիտական նյութերի համեմատական վերլուծության՝ այն թվագրվում է Ք.ա. 2-1 հազարամյակով։ Դամբարանադաշտն ավերված է, իսկ դամբարանների արտաքին նշանները՝ խաթարված։

Դարաբավոր այրեր։

Դարաբավոր այրերը հարուստ են բնական ու արհեստական բազմահարկ քարայր-կացարաններով, հարմարեցված են եղել երկար պաշարումներին դիմակայելուն՝ ջրի և սննդամթերքի կուտակմանը, անգամ ծնունդ ու կնունք կատարելուն, նաև Աստծո հետ հաղորդակցվելու համար պատրաստվել են ժայռափոր եկեղեցիներ։ Ուսումնասիրությունների արդյունքում այստեղից հայտնաբերվել են կազմակերպված բնակելի սենյակներ, ջրավազաններ, ընդեղենի հորեր, հրակնատներ, աղացներ։ Դարաբավոր այրերը տարբեր ժամանակներում բնակչության համար, պաշարումների և հարձակումների ժամանակ ծառայել են որպես պատսպարան՝ իրենց գաղտնի մուտքերով։

Քասաղի ձորում, Դարաբավոր այրերի ներքևում, կա մի տապանաքար, որը մինչև օրս պահպանվել է։ Այն կոչվում է «Նահատակի գերեզման»։ 18-րդ դարի սկզբին, Պարսկաստանում առաջացած խռովությունների ժամանակ շատացել են արշավանքներն ու հարձակումները։ Գտնվելով Քասաղի կիրճում՝ որոշակի դժվարություն են առաջանում այդտեղ այցելություն կազմակերպելու համար։

Ուրարտական ջրանցք։

Աշտարակի պատմական ջրանցքը, որը տեղացիները կոչում են Ականատեսի առու, կառուցվել է Ք.ա. 8-7-րդ դարերում՝ Ուրարտական (Արարատյան) թագավորության ժամանակ։ Ջրանցքը գտնվում է Քասաղի կիրճում, սկիզբ է առնում Աշտարակի Մուղնի թաղամասի (այն ժամանակ՝ գյուղ) մոտից, Քասաղ գետից, դրա աջակողմյան հատվածով շարունակվում մինչև Աշտարակ։ Ջրանցքը դարերի ընթացքում վերակառուցվելով՝ հասել է մինչև մեր օրեր։ Աշտարակի ջրանցքն անցնում է սարալանջի բազալտե եզրով՝ հատելով 11 թունել, 513 մետր ընդհանուր երկարությամբ։ Թունելները հիմնականում իրար մոտ են՝ Դարաբավոր այրերի դիմաց։ Ջրանցքի երկարությունը 9,1 կիլոմետր է, լայնությունը կազմում է 2-ից 3 մետր, իսկ խորությունը՝ 1-ից 1,5 մետր։ Սկզբնական շրջանում առուն փոքր է եղել և բավարարել է գյուղի այդ ժամանակվա պահանջներին, բայց Աշտարակի հետզհետե մեծանալու և այգիների ավելանալու հետ մեկտեղ, գյուղացիները մեծացրել, խորացրել ու լայնացրել են առուն։

Ուլատիտիկ բնակավայր:

Ուլատիտիկ բնակավայրը գտնվում է Աշտարակ քաղաքի արևելյան եզրին, համանուն բլրի վրա: Այստեղ հայտնաբերված դամբարանադաշտը թվագրվում է մոտավոր Ք.ա. 2-րդ հազարամյակի վերջ: Տարածքն ուսումնասիրվել է 1990թ. Գվ գ/ա արվեստանոցի պասպորտավորման՝ արշավախմբի կողմից: Դամբարանադաշտը բաղկացած է երկու մասից՝ առաջինը հարավարևելյան լանջն է, իսկ երկրորդը տարածքի հյուսիսում ընկած հատվածն է: Ըստ այդ ուսումնասիրությունների, ամենայն հավանականությամբ, դամբարանադաշտի այդ երկու հատվածները ժամանակին կազմել են մի ամբողջություն և ջրամբարների կառուցման հետևանքով բաժանվել երկու մասի: Հայտնաբերված դամբարանները արտաքինից նույնատիպ են: Դրանք թեթև ուրվագծված կրոմլեխներ են, ներսում մեծ քարերից դրված ծածկասալերի հատվածներով:

Ուլատիտիկում հայտնաբերվել են նաև Ամրոցի մնացորդներ: Այն գտնվում է Ուլատիտիկի արևելյան հատվածում՝ բլրի վերնամասում և մոտավոր թվագրվում է Ք.ա. 6-5 րդ դարեր: Ամրոցը հատակագծով կլոր կառույց է, ունի մեծ աշտարակաձև կառուցվածք և պատրաստված է մեծ ծավալներ ունեցող անմշակ քարերով

Չնայած նրան, որ Ուլատիտիկը պատկանում է պատմական շատ հին ժամանակաշրջանի և արժեքավոր հնավայր է, այստեղ որոշ հատվածներ գտնվում են վատ, իսկ երբեմն էլ շատ վատ վիճակում և աստիճանաբար վերածվում են աղբանոցի:

Մեր նպատակն է առանձնացնել, ուսումնասիրել և կատարել այդ տարածքների միջավայրի հարմարեցումը այցելության համար, ինչպես նաև ըստ հայեցակարգի անցկացնել հուշարձաններն իրար հետ կապող մայրուղի: Մայրուղուց կազմակերպել ամեն մի հուշարձանավայրը գնացող երթուղի: Մեծ կարևորություն ունի յուրաքանչյուր տեղանքի գոտևորումը, կազմակերպել մատչելի մոտեցումներ, անցումներ, հանգստի հատվածներ, տեղադրել անհրաժեշտ տեղեկատվական վահանակներ:

Քաղաքի շրջակա հուշարձանների կազմակերպմանն ուղղված գործողությունները բաժանվում են մի քանի մասի՝

1/ Աշտարակ քաղաքի շուրջ գտնվող հուշարձանների տարածքների մոտեցումները կազմակերպելու համար նախ հարկավոր է ձևավորել դրանց հաջորդականությունը և նշել դասավորությունը մայրուղու նկատմամբ՝ կազմակերպելով ուղղորդված շարժում, հաղորդելով տրամաբանական սկիզբ և վերջ: Հուշարձանատարածքների առավել նպատակահարմար հերթականությունը հետևյալն է՝

- Վերին Նավեր դամբարանադաշտ
- Ուլատիտիկ բնակավայր
- Դարաբավոր այրեր
- Ուրարտական ջրանցք

Այսպիսով, հուշարձանների դասավորությունը թույլ է տալիս դրանց մոտեցումները կազմակերպել՝ համատեղելով ժամանակագրական շերտը դրանց տեղադրության հետ: Հետևաբար, Աշտարակ քաղաքի շրջակա

հուշարձանատարածքների մոտեցման հաջորդականությունը սկսելով Վերին Նավերի տարածքից և ավարտելով Ուրարտական ջրանցքով, ստեղծվում է մոտեցման շղթա, որի վերջում սկսվում են Աշտարակի կորիզի հուշարձանները։

2/ Աշտարակի շրջակա հուշարձանատարածքների այցելությունն ավելի կազմակերպված դարձնելու համար անհրաժեշտ է դրանք գոտևորել և մի քանի հուշարձանատարածք վերցնել ընդհանուր գոտու մեջ՝ համաձայն իր տեղադրության։

3/ Հուշարձանատարածքների միջավայրի կազմակերպման մեջ կարևոր դեր ունի նաև տարբեր նպատակներով օգտագործվող հարակից կառույցների ավելացումը։

4/ Այցելություններն ավելի մատչելի դարձնելու համար անհրաժեշտ է ներգրավել տեսողական հաղորդակցության տարրեր։

5/ Հուշարձանատարածքներ այցելությունները հարմարավետ դարձնելու համար անհրաժեշտ է կազմակերպել նաև դրա երթուղու և անցումների տեսակները՝ մասնավորապես, ներկայացնել դրա առավել նպատակահարմար տեսակը։

Երրորդ գլուխ
Աշտարակ քաղաքի կորիզի հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը

Աշտարակի կորիզի տարածքի հուշարձանները աշխատության սկզբունքային նշանակության են։ Դրանց տարածքի դիզայներական կազմակերպումը կատարվում է զբոսաշրջական այցելությունների ներքոհիշյալ հաջորդականությամբ։

ա. Կենտրոնի հուշարձանները՝ Հրապարակը և նրա տարածքի հուշարձանները(մշակույթի տուն, Սբ. Մարիանե եկեղեցի, Ուռուց)։

Մշակույթի տուն։ Ներկայիս Աշտարակի հրապարակը, նախկինում լինելով գյուղի ամենամեծ և բանուկ հատվածը, եղել է գյուղամեջը։ Հրապարակում է գտնվում Աշտարակի քաղաքապետարանը և քաղաքային մշակույթի տունը։ Վերջինս կառուցվել է 1950 թվականին, ճարտարապետ Յուրի Յարալովի կողմից։ Երկհարկանի այս կառույցն ունի բոլոր պայմանները քաղաքում մշակութային կյանքը զարգացնելու համար։

Մշակույթի տունը գտնվում է բարվոք վիճակում և գործող է, սակայն այստեղ հազվադեպ են կազմակերպվում միջոցառումներ, ինչպես նաև բավական երկար ժամանակահատված վերանորոգման չի ենթարկվել և թարմացման արդյունքում այն կունենա նորովի ներկայանալու հնարավորություն։

Ուռուց։ Հրապարակից վերև բարձրացող հատվածը կոչվում է Ուռուց։ Տեղացիների կողմից այն իր անունը ստացել է ժամանակին այստեղ եղած ուռենիների առատությունից։ Ուռուցով է բաժանվել և Աշտարակի տարբեր հատվածներ հասել մայր առուն, որը, ինչպես արդեն նշվել է, մինչ այժմ քաղաքի ոռոգման ջրի միակ աղբյուրն է։ Բացի այդ, ուռուցը տեղացիների հավաքվելու սիրելի վայրն է եղել։

Սբ. Մարիանե եկեղեցի: Այս եկեղեցին գտնվում է Աշտարակի 5 հնագույն թաղերից է Վերին կամ Սբ. Մարիանեի թաղում, համանուն փոքր բլրի վրա: Կառուցվել է 13-րդ դարում, 1283 թվականին: Իր ընդհանուր հորինվածքով և յուրովի վերասլաց համաչափություններով այն ակնհայտորեն վկայում է 13-րդ դարի հայ ճարտարապետների լայն ստեղծագործական որոնումների մասին: Սկզբնական շրջանում եղել է աբեղաների վանք, ունեցել է հյուրատուն-եղբայրանոց, հետագայում վերածվել է սովորական ծխական եկեղեցու, որի համար եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց կառուցվել է ժողովրդանոց: 1839 թվականին գյուղացիների ջանքերով ժողովրդանոցը վերանորոգվում է, իսկ հարավային թևի վրա աշտարակցի Գևորգ Փարավոնյանի միջոցներով կառուցվում է փոքր զանգակատուն, որի մասին եկեղեցու հարավային պատի վրա փորագրված է արձանագրություն: 20-րդ դարի սկզբում հնագույն ժողովրդանոց տեղում կառուցվել է նորը, սակայն մնացել է անավարտ: 2019թ. Արագածոտնի թեմի ատենապետ Գրիգոր Մովսիսյանի և իր ընտանիքի հովանավորությամբ, վերսկսվեցին դրա վերանորոգման աշխատանքները, որն օծվեց 2020թ. փետրվարի 22-ին:

Աշտարակի Սբ. Մարիանեն, թերևս, քաղաքի միակ բարեկարգ հոգևոր կառույցն է, որտեղ եռուն հոգևոր կյանքի և բուն եկեղեցու խնամքի հետ մեկտեղ, նաև ուշադրություն է դարձվում դրա միջավայրին:

Աշտարակի քաղաքային այգին: Աշտարակի Կոմիտասի անվան քաղաքային զբոսայգու նախագիծը եղել է Յուրի Յարալովի քաղաքի նախագծման անհատական պլանի մեջ, Խորհրդային Միությունից հետո, երկար տարիներ այն գտնվել է անմշակ վիճակում և մշակման և վերականգնման աշխատանքներ սկսվել են միայն 2018 թվականից: Այստեղ է գտնվում քաղաքի ամառային կինոթատրոնի շենքը և 1945 թվականի զոհվածներին նվիրված հուշարձանը: Այն կառուցվել է 1974 թվականին: Հուշարձանի հեղինակը ճարտարապետ Վրեժ Թասլակյանն է:

Այգու հարևանությամբ գտնվում է քաղաքի երկու կողմերն իրար կապող նոր կամուրջը: Այն շահագործման է հանձնվել 1956 թվականին: Կամրջի կառուցումը մեծ նշանակություն է ունեցել Աշտարակի և, ընդհանրապես, ամբողջ Հայաստանի համար, քանի որ մինչ այդ օգտագործվել է Քասաղի կիրճի 17-րդ դարում կառուցված կամուրջը:

Բնակելի տների գոտին՝ Աշտարակի ժողովրդական բնակելի տները:

Աշտարակի տների կառուցման հիմնական տիպը միահարկ կամ երկհարկանի շինությունն է, որը բաղկացած է բուն բնակելի տնից, տնամերձ հողամասից և պտղատու կամ խաղողի այգով հողամասից: Միաշարք բնակելի տան տեղադրումը փողոցին զուգահեռ հնարավորություն է տվել տնամերձ հողամասն ու այգին հնարավորին չափ անջատել փողոցից: Փողոցի նկատմամբ բնակելի տների դասավորությունը իրականացվել է 3 եղանակով՝ փողոցին զուգահեռ, դրան ուղղահայաց և անկյունային: Կառույցների հիմնական շինանյութը եղել են տուֆն ու բազալտը՝ կավի շաղախով:

Աշտարակ քաղաքի պահպանված ժողովրդական տների մեծամասնությունը գտնվում է Գր. Ղափանցյան փողոցում: Դա նեղ փողոց է՝ երկու կողմերում կառուցված տներով: Այսինքն, որպես մշակութային արժեք անհրաժեշտ է

դիտարկել ոչ միայն առանձին բնակելի տները, այլ ընդհանուր փողոցը: Լինելով թերի պահպանված փողոց, այն ունի 19-րդ դարի Աշտարակի մշակույթն ու կյանքը ներկայացնող պուրակ-այգու վերածվելու հեռանկար:

Գ. Բերդաթաղի հուշարձանները: Բերդաթաղն Աշտարակի ամենահին թաղամասն է, որը բարձրանում է Քասաղ գետի աջ ափի բարձունքին՝ հյուսիսից հարավ տարածվող թեք լանջով: Աշտարակը, որպես գյուղ, ձևավորման սկզբնական շրջանում կազմված է եղել 5 թաղերից: Բերդաթաղը դրանցից հնագույնն է, որն իր անունը ստացել է այն բերդից, որի ներսում հաստատվել է գյուղի նախնական բնակչությունը, իսկ հետագայում բազմանալով, հետզհետե, ժամանակի ընթացքում տարածվելով՝ գոյացրել է մյուս թաղերը: Բնակավայրը՝ երկարավուն ձգված քառանկյան ձևով, հյուսիսից սահմանափակվել է Մուղնու բարձրավանդակով, որն իր դիրքով իշխել է ամբողջ տարածքի վրա:

Աշտարակի բերդը ձորի ամենաբարձր և ապառաժոտ հատվածում գրավել է ոչ շատ մեծ տարածք: Երեք կողմից շրջապատված է եղել բարձր պարիսպներով: Այն ունեցել է ուղղանկյան ձև և երկու կողմերում միացել է հյուսիսից՝ Ծիրանավորին, հարավից՝ Սպիտակավորին:

Ծիրանավոր եկեղեցին համարվում է Բերդաթաղի ամենահին կառույցը: Եկեղեցին արևելյան կողմից ունի պայտաձև խորան՝ իր կից ավանդատներով: Ներսի հատվածը երեք զույգ սյուներով բաժանված է երեք նավերի, որոնք պահել են ներկայումս քանդված երկթեք տանիքը: Եկեղեցու արևմտյան ճակատի արտահայտիչ շքամուտքը և պարզ զարդանախշով հարդարված կիսակամար լուսամուտները նույնպես բնորոշ են վաղ միջնադարյան կառույցներին: Շինությունը նշանավոր է եղել նաև իր երկակի նշանակությամբ, որը հարձակումների ժամանակ ծառայել է որպես ամրացված դիրք: Այդ է վկայում պահպանված երկհարկ պատի և դրա վրա գտնվող պաշտպանիչ փոքր դիտակետերի առկայությունը: Եկեղեցին պահպանվել է կիսաքանդ վիճակում և չի կորցրել իր պատմական ու գեղարվեստական նշանակությունն ու գրավչությունը:

Ծիրանավոր եկեղեցու տարածքի դիզայներական կազմակերպման համար նախատեսված են հայեցակարգային մի շարք գործողություններ, ինչի շնորհիվ հնարավորություն կստեղծվի հնագույն Աշտարակի երբեմնի պաշտամունքային կենտրոնի և ուշագրավ կառույցի գեղարվեստորեն ներկայացման, արդիականացման և պահպանման համար:

Սպիտակավոր եկեղեցին կառուցվել է թաղամասի հարավային մասում՝ Քասաղի կիրճի աջ եզրին, մի փոքր հրվանդանի վրա: Այն կարծես թե եղել է հին բերդի աշտարակ-դիտակետը և հսկել է դիմացի լանջով դեպի կամուրջն իջնող և Բերդաթաղ բարձրացող ճանապարհը: Եկեղեցին ունեցել է երկու մուտք՝ արևմուտքից և հարավից, որը բացվում է ուղիղ ձորեզրին: Շինության գլխավոր արևմտյան կողմի մուտքի երկու կողմերում պահպանվել են արձանագրության հետքեր: Սպիտակավոր եկեղեցին գտնվում է Ծիրանավորից քիչ հեռու, ժայռի եզրին՝ տեղադրված դրա անկյունային հատվածում: Չնայած իր փոքր չափերին, գտնվելով Քասաղի կիրճի բարձր ժայռի պռնկին՝ այն պատմամշակութային ուշագրավ և յուրահատուկ կառույց է, որը, ցավոք, քիչ հայտնի է:

Դիտարկելով եկեղեցու տեղադրությունն ու գտնվելու վայրը՝ միջավայրի կազմակերպման համապատասխան գործողություններ կատարելուց հետո, հնարավոր կլինի եկեղեցին ցուցադրել իր պահպանված ողջ հմայքով, նաև փորձ անել նպաստել դրա հնարավոր վերականգնմանը։

Սպիտակավոր եկեղեցու տարածքը նեղ է և փոքր, ուստի այստեղ միջավայրը կազմակերպելուց անհրաժեշտ է շեշտը դնել եկեղեցու պատմական հենքի, ճարտարապետական ձևի առանձնահատկության և իր նշանակության վրա։ Այսինքն, հորինվածքի և՛ կենտրոնը, և՛ դոմինանտը պետք է դառնա եկեղեցին։

Կարմրավոր եկեղեցին հայկական ճարտարապետության ամենաբնորոշ խաչաձև գմբեթավոր տիպի փոքր կառույց է, որն ամբողջությամբ պահպանվել և ներկայացնում է այդ հորինվածքով եկեղեցու հիմնական և միաժամանակ նաև դրա հնագույն տեսակը։ Այն կառուցվել է Կարմրավորի թաղի կենտրոնական մասի թեք լանջի հարթության վրա և գերազանց տեսանելի է քաղաքի բոլոր կետերից։ Եկեղեցու պատերին պահպանվել են մի շարք արձանագրություններ, որոնք վերաբերվում են գյուղի բնակիչների կողմից իրականացված վերանորոգումներին, ինչպես նաև ոռոգման ջրանցքի կառուցման դժվարություններին։

Կարմրավորի տարածքի առանցքը կազմակերպվում է ցանկապատված բակի և հուշարձանի արևմտյան ճակատի միջև։ Փաստորեն, բակը հավաքավայր՝ հորինվածքի կենտրոն է, որի շուրջ կազմակերպվում է հուշարաձանատարածքի առարակայական միջավայրը։

Առարակայական միջավայրի և հատկապես հուշարձանի ընդգծումը կատարվում է դիզայներական օժանդակ միջոցառումներով։ Այդ թվում են՝ լուսավորության ձևավոր տարրերը, հուշարձանի նշանակությունը պարզաբանող վահանակները, այցելուների շարժումը կազմակերպող ազդանշանային միջոցները։

Հուշարձանի դոմինանտությունը շեշտող դիզայնի տարրերը բակի կանաչապատումն է, տարածքի գունային ներկապնակը կազմող ծաղիկների դենդրոլոգիական ընտրությունը, այնպես որ տարվա բոլոր եղանակներին այն հուշարձանի շուրջ կազմի միջավայրի գունային նպատակահարմար գամման։

Կարմրավորի տարածքի կազմակերպման կարևոր միջոցառումներից է վահանակի միջոցով հուշարձանի և շրջակա տարածքի խաչքարերի հատակագծային ամրագրումը և դրանց բացատրությունների ապահովումը։

Բերդաթաղի արևելյան կողմում, Քասաղ գետի վրա կառուցված կամուրջն իր կառուցողական տեխնիկայով հայ միջնադարյան կամրջաշինության նշանավոր կառույցներից է և իր չափերով Հայաստանի մեծ կամուրջներից մեկն է՝ կառուցված սրբատաշ ծիրանագույն տուֆաքարով և կրաշաղախով։ Ժամանակի ընթացքում կամուրջը փլուզվում է։ Այժմ Աշտարակի ներկայիս կամրջի մոտակայքում պահպանվել են այդ հին՝ ենթադրաբար X-XIII դդ. կամրջի մնացորդները։ Դրան փոխարինող նոր կամուրջը 1664 թ. կառուցել է Մոծակենց Մահտեսի խոջա Գրիգորը՝ ըստ XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու վկայության, որի մասին կամրջի միջին և մեծ կամարների միջև փորագրված է եղել արձանագրություն, որն այժմ սվաղված է։ Ներկայացնելով ուշ միջնադարյան Աշտարակը և իրար կապելով քաղաքի կորիզի և շրջակա հնագույն հուշարձանատարածքները, այս կամուրջն

ունի նորովի ներկայանալու հեռանկար։ Այսպիսով, կատարելով նշված տարածքի դիզայներական կազմակերպման միջամտություններ, մասնավորապես ըստ հայեցակարգի կատարել հորինվածքի ձևավորումը՝ իրենից բխող գործողություններով (հորինվածքի կենտրոնի ստեղծում՝ իր առարկայական միջավայրով, դոմինանտը շեշտող տարրերի ներմուծում, տարբեր գործառույթներ կատարող լուսավորման սարքավորումների համալրում և այլն), Աշտարակի միջնադարյան կամուրջն ունի հուշարձանի պահպանության և միաժամանակ ժամանակակից կյանքին ինտեգրման հեռանկար։

Բերդաթաղի մի նշանավոր կառույց է նաև Պերճ Պռոշյանի տուն-թանգարանը։ Այն կազմավորվել է մեծանուն գրողի հայրական տան տեղում՝ 1948թ.։ Սկզբնական շրջանում այն բաղկացած է եղել հացատնից և երկու փոքր սենյակներից, իսկ 1965թ. կառուցվել է ևս մի սենյակ։ Թանգարանի երկհարկանի շենքը կառուցվել է 1990 թվականին։ 2008թ. վերակառուցվել է թանգարանի շենքը և վերականգնվել ցուցադրությունը, իսկ բակում տեղադրվել է գրողի արձանը (հեղինակ՝ քանդակագործ Սուրեն Ստեփանյան)։

Աշտարակի Բերդաթաղն իր կառուցապատմամբ և ներկայացված հուշարձաններով պահպանության արժանի ճարտարապետական հարստություն է։ Տարածքն ունի հետաքրքիր կառուցապատում, որ արժանի է թանգարանացման և, հետևաբար, միջավայրային կազմակերպման։

Բերդաթաղի հուշարձանների պահպանության և դրանց լիարժեք կենսագործունեության հնարավորությանը նպաստելու համար՝ ըստ ստեղծված հայեցակարգի, ձևավորել և առանձնացրել ենք միջավայրի պահպանության և դիզայներական կազմակերպման որոշ միջոցառումներ։ Այդ միջոցառումներն են՝

- մաքրել և կոնսերվացնել տարածքի կառուցապատումը,
- անհրաժեշտության դեպքում ցանկապատել հուշարձանների տարածքը,
- տեղադրել լուսավորության սարքավորումներ և՛ տեղանքի պարագծով, և՛ հուշարձանային տարածքների իշխող դիրքերից,
- կազմակերպել տարածքի այցելության հորինվածքային առանցքը, այնպես, որ ամեն մի հուշարձան ունենա նշադրված կամ ազդանշանային մոտեցում, բացատրության վահանակ, հավաքման հանգույց, միջավայրի առարկայական տարրեր(նստարաններ, աղբամաններ և այլն),
- տարածքում ապահովել ջրի և սանհանգույցի կետեր,
- համապատասխան հարմար տարածքում տեղադրել հուշանվերների և ձեռքի աշխատանքների վաճառքի կրպակներ։

Ներկայացված բոլոր պատմական և ճարտարապետական կառույցները միասին խմբավորել և ձևավորել են Բերդաթաղ պատմական-մշակութային միջավայրը, որը, լինելով Աշտարակի ամենահին թաղամասերից մեկը՝ կարևոր դեր ունի քաղաքի և Հայաստանի պատմական ու մշակութային միջավայրի ներկայացման մեջ։

Եզրակացություններ

Ամփոփելով սույն ատենախոսությունը՝ կարելի է նշել, որ Աշտարակ քաղաքը Հայաստանի Հանրապետության պատմական քաղաքներից մեկն է, որտեղ կան

տարբեր ժամանակաշրջանների պատկանող ուշագրավ պատմամշակութային հուշարձաններ, որոնք ունեն պահպանման և նորովին ներկայանալու հեռանկարներ։ Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ներկայումս, հուշարձանները ժամանակակից կյանքին ինտեգրելու և դրանց կենսագործունեության լիարժեք ապահովման համար, բուն հուշարձանապահպանության մինչ այս կիրառվող ճարտարապետության և զբոսաշրջության միջոցառումներից զատ, կարևոր է նաև հուշարձանը շրջապատի հետ ներդաշնակեցնող գեղագիտական և ֆունկցիոնալ միջոցառումների կիրառումը՝ պատմամշակութային հուշարձաններիի տարածքի դիզայներական կարգավորումները։

Ատենախոսության առաջին գլխում մանրամասն ուսումնասիրվել են պատմական քաղաքների հուշարձանատարածքների կազմակերպման սկզբունքները, միջավայրի դիզայնի դրույթները և միջազգային փորձը, դասակարգվել են Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանները, ըստ ժամանակաշրջանի և բաժանվել երկու գոտու՝ քաղաքի շրջակա հուշարձաններ և պատմական կորիզի հուշարձաններ։ Սույն գլխում կատարած ուսումնասիրությունները հանգեցնում են այն եզրակացությանը, որ պատմական քաղաքների պահպանությունը կարևոր է երկրի ճանաչելիության և հետագա զարգացման համար, նաև կարելի է փաստել միջավայրի դիզայնի կարևորությունը դրանց պահպանության մեջ։ Այդ ուսումնասիրությունների հիման վրա ձևավորվել է Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի կարգավորման հայեցակարգը։

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվել է առաջին գոտու՝ Աշտարակ քաղաքի շրջակա հուշարձանատարածքները։ Այստեղ կա 5 հուշարձանատարածք (Վերին Նավեր դամբարանադաշտ, «Արծվի թև» հուշահամալիր, Խոջաբաղեր կամ Խաչայգի դամբարանադաշտ, Դարաբավոր այրեր, Ուլատիտիկ բլուր), որից 4-ն ունեն պահպանության և յուրովի ներկայացման հնարավորություն։ Այս գլխում կատարված ուսումնասիրությունը, որը ներառում է համաշխարհային և տեղի հնագիտական տարածքների թանգարանացման օրինակներ, փաստում ենք, որ այդ տարածքների պահպանումն ունի մեծ կարևորություն և ըստ 1972 թ. Համաշխարհային կոնվենցիայի՝ «մշակութային կամ բնության ժառանգության ցանկացած օբյեկտի վնասումը կամ անհետացումը հանգեցնում է աշխարհի բոլոր ազգերի ժառանգության կործանարար աղքատացմանը»:

Ատենախոսության երրորդ գլխում ուսումնասիրելով Աշտարակի պատմական կորիզի հուշարձանները, երևում է, որ հիմնականում լինելով միջնադարյան կառույցներ, կոթողներ և թաղամասեր, դրանք մեծ դեր են խաղացել բնակավայրի սկզբնավորման և հետագա զարգացման մեջ։ Այստեղ են գտնվում քաղաքի հնագույն 5 թաղամասերը, որտեղից սկզբնավորվել է Աշտարակը։ Հետևաբար դրանց պահպանությունն ու արդիականացումն ունի սկզբունքային նշանակություն։ Այդ կապակցությամբ թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է քաղաքի այդ գոտու մեջ ներառվող յուրաքանչյուր հուշարձանատարածք՝ իր շրջակա տարածքի հետ միասին։ Ուսումնասիրելով դիզայնի համաշխարհային տենդենցները, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ կիրառելով միջավայրի

դիզայնի սկզբունքներն ու դրանց հիման վրա ձևավորված հայեցակարգը, Աշտարակ քաղաքի կորիզի հուշարձանները կարող են ունենալ պահպանության և քաղաքի զարգացմանն ինտեգրվելու մեծ հեռանկար։
Ամփոփելով կարելի է նշել, որ պատմական քաղաքները կարիք ունեն տարածքային զարգացման այնպիսի հայեցակարգերի, որոնցում կպահպանվեն պատմամշակութային առկա առանձնահատկությունները։ Պատմամշակութային տարածքների պահպանության և վերականգնման նախագծերում պետք է համապատասխանեցվեն կենդանի միջավայրի և ընթացիկ ճարտարապետական շինարարական մեթոդների մասին եղած ժամանակակից գաղափարները։ Աշտարակի պատմամշակութային հուշարձաններն ունեն ճարտարապետական, պատմական, գեղարվեստական և զբոսաշրջային մեծ կարևորություն։ Հետևաբար, կարևորելով մարդկանց կյանքի բարելավումը և Աշտարակի պատմամշակութային հուշարձանների պահպանությունը միաժամանակ, այդ հուշարձանները քաղաքի զարգացմանն ինտեգրելու և պահպանելու համար առաջնահերթ է դրանց և շրջակա տարածքների դիզայներական կազմակերպումը։ Այլ կերպ ասած՝ միջավայրի դիզայնն իրար է կապում նպատակը, համատեղելիությունը, գործառույթը և գեղարվեստականությունը։

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատությունները

1. Ոսկանյան Ռ., Աշտարակ քաղաքի Գր. Ղափանցյան փողոցի ժողովրդական բնակելի տներն ու դրանց միջավայրի կազմակերպումը, Կանթեղ, Գիտակրթական հոդվածներ, Երևան, 2018, էջ 228-236:
2. Ոսկանյան Ռ., Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքների գոտևորումն ու կազմակերպման հայեցակարգը, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Տարեգիրք, թիվ 6, Երևան 2018, էջ 83-91:
3. Ոսկանյան Ռ., Աշտարակի հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպման սկզբունքները, Տարածաշրջան և աշխարհ, գիտավերլուծական հանդես, հատոր XI, № 3, Երևան, 2020, էջ 133-139
4. Восканян Р. Памятники бердатага в Аштаракской области и общая организация их территории, Международный научный журнал «Научные вести» № 7(24), ISSN № 2619-1245, Россия, г. Белгород, 2020, стр. 14-25
5. Ոսկանյան Ռ., Աշտարակի հնավայրերի կամ էքսպեդիցիոն տարածքների հուշարձանային կազմակերպումը, Տարածաշրջան և աշխարհ, գիտավերլուծական հանդես հատոր XI, № 4, Երևան, 2020, էջ 72-77
6. Ոսկանյան Ռ., Աշտարակ քաղաքի կորիզի հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը, Տարածաշրջան և աշխարհ, գիտավերլուծական հանդես հատոր XI, № 4, Երևան, 2020, էջ 78-83

ВОСКАНЯН РУБЕН ГАГИКОВИЧ
ДИЗАЙНЕРСКИЕ ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ ТЕРРИТОРИИ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ ГОРОДА АШТАРАК
РЕЗЮМЕ

Город Аштарак - один из небольших исторических городов Армении, который, имея памятники разных периодов, находится в запущенном состоянии, поэтому его необходимо заново изучить, сохранить, модернизировать и интегрировать в развитие города.

Тема диссертации - проблемы проектирования организации среды памятников истории и культуры города Аштарак.

Предметом диссертации являются памятники истории и культуры города Аштарак с точки зрения организации их среды обитания, в том числе хронологии, генерального плана, пространственных вопросов, адаптации к посещению и т. д.

Исторические и географические рамки диссертации включают в себя большой исторический период: от мавзолеев бронзового века до построек 20-го века.

Актуальность диссертации заключается в том, что она связывает мероприятия, направленные на сохарнение памятников, с обеспечением эстетических и функциональных мероприятий по гармонизации памятника с окружающей средой, что в свою очередь и является дизайнерской задачей и способствует обеспечению полноценного биосуществования памятников.

Целью диссертации является выявление задач дизайнерской организации территорий историко-культурных памятников города Аштарак и определение их концепции.

Новизной диссертации является исследование, впервые проведенное с точки зрения дизайна, которое критически дополняет архитектурные и туристические программы сохранения историко-культурного наследия города Аштарак.

Диссертация состоит из трех глав и введения.

Первая глава - это информационное введение. В нем представлено историческое развитие города Аштарак, хронологическое разделение памятников города и его окрестностей, а также принципы организации памятников малых городов, которые основаны на общих положениях, представленных на работе Основы дизайна и средовое проектирование от Шимко.

Вторая глава - аналитическое исследование документально-проектной организации территории памятников истории и культуры вокруг Аштарака. В этой главе окружающие памятники города классифицируются по месту нахождения и хронологии.

Третья глава - аналитическое исследование документально-проектной организации территории памятников истории и культуры ядра города Аштарак. Эта глава имеет принципиальное значение, так как здесь сосредоточена основная часть историко-культурный памятников и здесь формируется исторический центр города. Памятники были представлены по местанахождению, сделаны предложения по организации их територии, а также по сохранению и модернизации.

В общих выводах диссертации обобщено понятие, используемое в целях диссертации и применяемое в диссертации.

Мы выделили несколько групп памятников, которые объединены своими историческими и архитектурными особенностями. Для города Аштарак они являются:

- средневековые религиозные сооружения: церкви с прилегающими или отдельными историческими кладбищами (также с хачкарами),
- мосты
- бытовые - коммунальные сооружения (бани 19-20 веков),
- памятники-достопримечательности,
- жилые исторические дома (в том числе дом-музей П. Прошяна).

В результате исследования становится ясно, что в настоящее время для интеграции памятников в современную жизнь и для полного обеспечения их жизнедеятельности, помимо ранее использовавшихся архитектурных и туристических мер, необходимо также применить эстетико-функциональные меры для гармонизации памятника с его окружением.

В первой главе диссертации подробно изучены принципы организации памятников в исторических городах, положения проектирования окружающих сред и международный опыт. Историко-культурные памятники Аштарака были классифицированы по периоду и разделены на две зоны: памятники вокруг города и памятники исторического ядра.

Исследование во второй главе диссертации, включающей примеры музеев мировых и местных памятников, показывает, что сохранение этих памятников имеет большое значение в развитии исторического города.

В третьей главе диссертации, изучая памятники исторического ядра Аштарака, мы доказываем, что в основном будучи средневековыми постройками, памятниками и районами, они сыграли большую роль в зарождении и дальнейшем развитии города. Поэтому их сохранение и модернизация имеет принципиальное значение.

В заключение можно отметить, что историческим городам необходимы такие концепции территориального развития, в которых будут сохранены существующие исторические и культурные особенности. Современные представления о архитектурных приемах жилой среды должны быть согласованы с проектах консервации и реставрации историко-культурных территорий. Исторические и культурные памятники Аштарака обладают большим архитектурным, историческим, художественным и туристическим потенциалом. Поэтому, чтобы улучшить жизнь людей и одновременно сохранить исторические и культурные памятники Аштарака, интегрировать и сохранить эти памятники в развитии города, проектная организация окружающей среды является приоритетом.

RUBEN GAGIK VOSKANYAN

DESIGN PROBLEMS OF ORGANIZING THE TERRITORY OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF THE CITY OF ASHTARAK

SUMMARY

The city of Ashtarak is one of the small historical cities of Armenia, which, having monuments from different periods, is in a state of disrepair, so it needs to be re-studied, preserved, modernized and integrated into the development of the city.
The topic of the dissertation is the problems of designing the organization of the environment of historical and cultural monuments of Ashtarak city. The subject of the dissertation is the historical and cultural monuments of the city of Ashtarak from the point of view of the organization of their environment, including chronology, master plan, spatial issues, adaptation to visit, etc.
The historical and geographical framework of the dissertation includes a large historical period: from the mausoleums of the Bronze Age to the buildings of the 20th century.
The relevance of the dissertation lies in the fact that it links activities aimed at preserving monuments with the provision of aesthetic and functional measures to harmonize the monument with the environment, which in turn is a design task and contributes to ensuring the full biological existence of monuments.
The purpose of the dissertation is to identify the tasks of the design organization of the territories of historical and cultural monuments of the city of Ashtarak and to define their concept.
The novelty of the thesis is the research, first carried out from the point of view of design, which critically complements the architectural and tourism programs for the preservation of the historical and cultural heritage of the city of Ashtarak.
The dissertation consists of three chapters and an introduction.
The first chapter is an informational introduction. It presents the historical development of the city of Ashtarak, the chronological division of the monuments of the city and its environs, as well as the principles of organizing the monuments of small towns, which are based on the general provisions presented in the work Basics of Design and Environmental Design by Shimko.
The second chapter is an analytical study of the documentary and design organization of the territory of historical and cultural monuments around Ashtarak. In this chapter, the surrounding city monuments are classified by location and chronology.
The third chapter is an analytical study of the document-design organization of the territory of historical and cultural monuments of the core of Ashtarak city. This chapter have fundamental importance, since the main part of the historical and cultural monuments is concentrated here and the historical center of the city is formed here. The monuments were presented according to their location, proposals were made for organizing their territory as well as for preserving and modernizing.
The general conclusions of the dissertation summarize the concept used for the purpose of the dissertation and used in the dissertation.
As a result of our research, we have identified several groups of monuments that are united by their historical and architectural features.
For the city of Ashtarak they are:
• medieval religious buildings: churches with adjoining or separate historical cemeteries (also with cross stones),

• bridges
• household - communal facilities (baths of the 19-20 centuries),
• monuments, sights,
• residential historical houses (including P. Proshyan's house-museum).

As a result of the study, it becomes clear that at present, in order to integrate monuments into modern life and to fully ensure their life, in addition to the previously used architectural and tourist measures, it is also necessary to apply aesthetic and functional measures to harmonize the monument with its surroundings.

The first chapter of the dissertation examines in detail the principles of organizing monuments in historic cities, the provisions of environmental design and international experience. Historical and cultural monuments of Ashtarak were classified by period and divided into two zones: monuments around the city and monuments of the historical core.

The research in the second chapter of the dissertation, which includes examples of museums of world and local monuments, shows that the preservation of these monuments is of great importance in the development of the historical city.

In the third chapter of the dissertation, studying the monuments of the historical core of Ashtarak, we prove that, mainly being medieval buildings, monuments and districts, they played a big role in the birth and development of the city. Therefore, their preservation and modernization is of fundamental importance.

In conclusion, it can be noted that historical cities need such concepts of territorial development in which the existing historical and cultural characteristics will be preserved. Modern ideas about the architectural techniques of the living environment must be coordinated with the projects of conservation and restoration of historical and cultural territories. Historical and cultural monuments of Ashtarak have great architectural, historical, artistic and tourist potential. Therefore, in order to improve people's lives and at the same time preserve the historical and cultural monuments of Ashtarak, integrate and preserve these monuments in the development of the city, the design organization of the environment is a priority.